

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/6

28 ապրիլի 2017թ.

Քննարկվեց ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի «ԳԻՎՎԻՆԳՍ» ՍՊԸ 10.02.2017թ. վարչական բողոքը մասնակի բավարարելու վերաբերյալ 10.03.2017թ. որոշման պահանջները կատարելու հարցը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 29.11.2016թ. նիստում քննության է առնվել «ԳԻՎՎԻՆԳՍ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 26.09.2016թ. թիվ 329435/05 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) դեմ: Արդյունքում ընդունվել է 37/4 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 26.09.2016թ. թիվ 329435/05 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել:

Ընկերությունը համաձայն չլինելով Հանձնաժողովի 29.11.2016թ. թիվ 37/4 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 29.11.2016թ. թիվ 37/44 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ ընկերության բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 10.03.2017թ. կայացվել է որոշում, որի համաձայն «ԳԻՎՎԻՆԳՍ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է մասնակի՝ անվավեր է ճանաչվել Հանձնաժողովի 29.11.2016թ. թիվ 37/4 որոշումը, ինչպես նաև պարտավորեցվել է Հանձնաժողովին կայացնել նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 26.09.2016թ. թիվ 329435/05 որոշման դեմ բերված գանգատի նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 10.03.2017թ. որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, գտնում է, որ Որոշումը ենթակա է վերանայման, մասնավորապես՝ որոշմամբ նշանակված տուգանքի չափը 20.000 դրամի փոխարեն անհրաժեշտ է սահմանել 10.000 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 26.09.2016թ. թիվ 329435/05 որոշմամբ նշանակված տուգանքի չափը 20.000 դրամի փոխարեն սահմանել 10.000 դրամ:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ